




193

L II 2










ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ  
Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

ՆԱԲԱԿ ԿԱՐ ՈՐ ԵՒ Ե ԳՈՒԹԻՆԸ  
ՊԵՏՔ Ե ՈՒՂՂԵՒ ՍՈՒ  
Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ ԲՐԱԳՐԻ  
ԳԱՇԻՐԷ (Հասցեագրվել)

Rédaction du journal arménien  
**ARCHALOUICE**  
HABBANIEH LE CAIRE (ÉGYPTE)



ԼՐԱՔԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

|                         |  |
|-------------------------|--|
| ՄԻՊՏՈՍԻ ՀԱՐԱՐ           |  |
| Տարեկան, ողջ դահլիճ. 60 |  |
| Վեցամսեայ » 35          |  |
| ՕՏԱՐ ԵՐԿՐԵՐ             |  |
| Տարեկան Թրանկ 20        |  |
| Վեցամսեայ » 12          |  |

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆ ԿԱՆՆԻԿ Է  
ԵՒ ԹՂՔԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ  
Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած  
գրութիւնք հս չեն տրուիր:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Թերթիս նիւթական մատակարարութիւնը պայմանաւորեալ ընկերներէն Տիար Ս. Դարբինեան ստանձնած ըլլալով, բաժանորդաց ստացականներն անոր ստորագրութիւնը պիտի կրեն, խմբագրութեան կնքոյն հետ:

ԵԳԻՊՏԱԲՆԱԿ ՀԱՅՈՒԹԵԱՆ  
Պ Է Տ Ք Ը

Հայ գաղութի նոր ու սուտար հոսանք մը, բունութեան ամենի ձեռքերէն հալածական Եգիպտոս ուղղուելով՝ անոր երկու Ոստաններուն մէջ հաստատուելն և արդէն գանուածներուն քանակը բազմապատկելն ի վեր, ժողովրդական նորանոր և անհրաժեշտ պէտքեր զգալի դարձան:

Գաղափարաց շիւղձ և մերձեցում, սոհմային զգացմանց մղում, այլ և այլ շրջանակներու և միջին խաւերու մէջ կատարուած ինչ ինչ միակողմանի արարքներու օրը օրին գիտակցութիւն և այս ամէնը աչքի և մտաց առջև ունենալու, ուղիղ գատողութեան ենթարկելու և լարուած ուղեղներով հետեւելու համար իրողութեանց, նշանակելի միջոց մը կը պակսի Եգիպտոս հայոց մէջ, լրագրութիւնն է այն:

Ամենուրէք և մանաւանդ մեզ համար ստուգապէս լուսաւորեալ համարուած ազգերու ու ժողովրդոց մէջ, լրագրութիւնք իրենց արժանաւոր տեղն ու գիրքը գրաւած են և իրենց ստանձնած դերերը կը կատարեն օգտակարապէս, որոց շնորհիւ խաւարի որդւոց մեքենայութիւններու յարաշարժութիւնը կը կորսուի, սանձարձակ կը քերու յարաճուն յառաջխաղացութիւնը կը կասի, տգէտներու մտաց մէջ լըսը կ'արծարծի, անտարբերներուն եռանդը կը զարթնու և վերջապէս ի մի բան ժողովրդի մը մտաւորական եւ բարոյական մակարդակը կը բարձրանայ և կ'ընդլայնի. ահաւասիկ լրագրութեան բացարձակ օգուտները և գերը ազգութեան մը բարձր, ստորին և առհասարակ ամէն գասակարգութեան մէջ:

Մենք թերեւս զրկուած մնայինք լրագրութեան այս կենսունակ առաւելութիւններէն՝ եթէ ընթացիկ տարւոյս ապրիլ ամսուն մէջ Փիլիսի կիսամսեայ հանդէսը իւր ծրագրած նպատակաւ և ուղղութեամբ հրա-

պարակ չի գար, և եթէ մեր բարեկամներն ու աշակիցներ չ'ստիպէին զմեզ մեր ներկայ թերթով նոր ուժ մը աւելցնել անոր սկսած գործին և լրացնել ժողովրդական այս կենսական պէտքը:

Երբ ժողովուրդ և լրագրութիւն՝ գիտակց իրենց փոխադարձ պարտականութեանց, համերաշխութեան ոգով կը փարին միմեանց եւ ձեռք ձեռքի տուած կ'ընթանան իրենց սահմանեալ ուղին, այն ատեն բիրտ ու անհեթեթ ուժեր կը շլատուին և կը փշրին անոնց քայլերուն առջև, բունութիւնն ու անիրաւութիւնը կը խոնարհին իրենց բարձունքէն և ուղղամտութիւնն ու արդարասիրութիւնը կը հասնի թագաւորել ամէն դասակարգերու վրայ. ժողովրդի մը երջանկութիւնը հոս պէտք է վնասու. ահա թէ ինչո՞ւ մենք իրաւունք պիտի կըրնանք ունենալ պահանջելու, որ հանրութիւնը իւր զօրաւոր աշակցութիւնը նուիրէ մեզ բարոյապէս և նիւթապէս, բան մը որ անկարելի տեղ մը չի գրաւէր մտածելու համար, այսպիսի ձեռնարկներու սկսուած ատեն:

Մեր ծրագրի և ուղղութեան մասին մեր ներկայ անդրանիկ թուոյն մէջ բան մը ըսել չենք ուզել ընթերցողներուն. վարդագոյն և յուսալից խոստումներու երկար շարք մը, ինչպէս որ սովորութիւն եղած է յաճախ գործածել, աւանդական և անարժէք կը նկատենք, այլ մեր ուղղութեան հետեւող հետաքրքիրներուն կ'առաջարկենք, որ ժամանակի հոլովման և հետըզհետէ հրապարակ ելած թիւերու պարունակութեան մէջ որոնեն, ինչ որ կը հաւատանք թէ պիտի գոհացնէ զիրենք, որովհետեւ մեր նշանաբանն է կամք և ջանք. ծրագրի համառօտութիւնը՝ հեռի մնալ անձնականութիւններով դրազելէ և կուսակցական անօգուտ վէճերէ. նպատակը՝ օգտակարը ընտրել և ճանչցունել թէ՛ ընկերային ամենէն վեհ փողփողումներն, գիտութենէ, գայլութենէ, ճարտարութենէ և ուսումէ կ'արտագրին և ասոնց կը հետեւի մեր յառաջդիմութիւնն ու ազատութիւնը:

Տեղւոյս մէջ աշխատակիցներու համեատ խմբակ մը կազմակերպելէ զատ, Կ. Պօլսոյ և այլ հեռուոր կեդրոններու մէջ հաստատուած հայ գաղթականութեանց և հայ յաշատ գաւառներու մէջ մանաւանդ ունինք և հետզհետէ պիտի ունենանք մեր վստա-

հելի և կարող թղթակիցներն ու աշակիցներ, որք տեղական ազգային և այլ կարեւոր նիւթերու վրայ ամբողջ ու ճշգրիտ տեղեկութիւններ պիտի հայտնեն, իրենց ապրած միջավայրերու բարուց և նկարագրին պիտի ծանօթացնեն մեզ և այսպէսով փոխադարձ համարումի և կարեկցութեան շղթայ մը պիտի կարենանք հաստատուել մեր տառապեալ եղբայրներու հետ:

Այսպէս ուրեմն շատ զոհողութիւններ և շափազանց աշխատութիւն մենք ստանձնելով և քաջալերութիւնը մերաջնէից գիտակցութեան և բարեացակամութեան թողլով, ձեռնարկեցինք ամբողջացնել պակաս մը արմաւենիներու երկրին մէջ, որ շարժութը գոնէ երկու անգամ հրատարակելի թերթի մը անհրաժեշտ պէտքն է:

Ե.

Հետեւեալ յօդուածը զրկուած է մեզ ի հրատարակութիւն. անկալմնակալութիւնը պարտք կը զնէ Խմբագրութեանս վրայ հիւրընկալել զայն, իրեն վերապահելով կարգ մը նկատողութիւններ ի հարկին ընելու համար:

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ ՇՈՒՐԶԸ

Գլխաւորական հարցաքննութեանց եւ արձակուրդի եզանակին մէջ կը գտնուինք ահա:

Անցեալ Յունիս ամսոյ 19ին տեղւոյս ազգային վարժարանին տարեկան հարցաքննութիւնք սկսան, եւ յաջորդ կիրակին ալ վարժարանի սրահին մէջ մրցանակաբաշխութեան փայլուն հանդէսով մը վերջացան:

Հարկ է բնի սակայն թէ վարժարանին կըրթական վիճակը չէր համապատասխաներ հանդէսին շուքին ու փայլին, կամ թէ տարբեր կերպով բացատրելով, գլխաւորական ուսումնական վիճակը հանդէսին շքեղութեան հետ խոտորակ համեմատութիւն ունէր:

Հարցաքննութիւնք սկսելուն մենք ալ ուրիշներուն պէս փափաք ունեցանք ներկայ գրանուիլ: Երկու տարուան արգիւնքն էր որ պիտի տեսնէինք: Վասն զի երկու տարի առաջ աստ կըրթական գործին մզում մը տարու գովելի նպատակաւ պիւտձէի կարեւոր յաւելում մ'եղած և նորանոր ուսուցիչներ պաշտօնի կոչուած էին:

Մենք որ ուսանողաց կողմէն զգալի յառաջդիմութիւն մը տեսնելու յուսով գացած էինք, պարզապէս յուսախաբութեան մասնուեցանք:

Հոս հարկ կը համարինք յայտնել թէ յիշեալ Ազգ. վարժարանը կրկնական կառավարութեան յօրինած կըրթական ծրագրին համեմատ կըրթանայ բառական ճշգրտութեամբ: Գաղափար մը տարու համար թէ այդ ծրագրով ինչ ձախող և յետագէ՛մ վիճակի մը մէջ կը գտնուի Ազգ. վարժարանը, բա-

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Լական կը համարինք մի քանի դասերու քննու-  
թեանց արդիւնքը ցոյց տալ համառօտի :

Հայերէն ութ մասունք բանի կարգացող եւ  
կարգացածը հազիւ հասկցող 12—13 տարեկան  
հայ տղաքներ — որոնք Գիտելիք եւ Պարսիք անուն  
դասագրքէն ընթերցում կ'ընէին հանդերձ բացատ-  
րութեամբ — իրազիտութեան եւ աշխարհագրու-  
թեան քննութիւնը գիտէ՞ք ինչ լեզուաւ կուտա-  
յին. անգղիերէն . . . all-right !

Աշակերտը իրեն գրաւոր տրուած գասը թու-  
թակի պէս պոց կը զրուցէր առանց որոշ գաղա-  
փար մ'ունենալու ըսածներուն վրայ, եւ ո՞վ գիտէ  
մտքի ի՞նչ տուեալստանքով կրցած էր այդ չափն ալ  
յաջողելու :

Ուսուցիչը տղու մը հարցունելով թէ Ափրի-  
կէի մէջ ի՞նչ գետեր կան, — տղան խզոր մոլոր  
աշխարհացոյց տախտակին վրայ նայելով պատաս-  
խանց թէ Ափրիկէի մէջ գետ չ'կայ: Սեղծ տղան  
տեղեկութիւն իսկ չունէր թէ ինքը Ափրիկէան  
ցամաքին վրայ կը գտնուի եւ անոր մէջ մեծ գե-  
տէն է որ գիշեր ցերեկ պայպկը կ'անցունէ :

Ինչպէս որ ըսի, իրազիտութիւնն ալ անգ-  
ղիերէն լեզուով է: Բայց չկարծուի թէ իր անու-  
նին համապատասխան եղանակով մը, ո՞չ. այլ կրց-  
կըսուր եւ խիստ համառօտ կ'աւանդուի, որպէս  
զի ուսանողը կարենան բառ առ բառ գոց ընել:

Յորժէ հետէ մանկավարժական բարերար դրու-  
թիւնը մեռ գտած է մեր մէջ, իրազիտութեան  
կանոնաւոր դասընթացը մը հաստատուած է գրէ-  
թէ ազգային բոլոր վարժարաններուն մէջ, որպէս  
զի տղան փոքր հասակէն կատարելալ ծանօթու-  
թիւն ունենայ զինքը չըջապատող իրերուն վրայ:  
Գալուստեան վարժարանին Հոգաբարձութիւնը —  
Չը մտնում ըսելու թէ յիշեալ վարժարանի Հոգա-  
բարձութիւնը մէկ անգամէ միայն կը բաղկանայ —  
եւ Տնօրէնութիւնը պահանջուած հոգածութիւնը ու-  
նեցած չէին, որ այդ խիստ պիտանի գիտութիւնէն  
տղայք պէտք եղածին չափ օգտուէին:

Թուարանութեան դասն ալ աղոց մէկ մասին  
զաղիերէն եւ մէկ մասին ալ անգղիերէն լեզուաւ  
կ'աւանդուի թուարանութիւնը, որ ինքնին ար-  
գէն մեծ ու զծուարին գիտութիւն մ'է՛ր որ տղուն  
ուղիղ խորհիլ ու դատելու կարողութիւնը վար-  
գացնելու միակ միջոցն է եւ որ հասկնալի լեզ-  
ուաւ ինչպէր մը պարզել եւ լուծելու համար բա-  
ւական աշխատութիւն եւ յաջողակութիւն կը  
պահանջէ. թուարանութիւնը, կ'ըսենք, անգղիե-  
րէն եւ գաղիերէն լեզուաւ դասախօսուած էր:  
Բնականաբար այդ ուսման մէջ ալ շատ քիչ յա-  
ռաջագիտութիւն մ'ըրած էին: Բարձրագոյն կար-  
գի աշակերտք (16—17 տարեկան տղաքներ) մէթ-  
րական դրութիւն, եզրպտական եւ անգղիական  
չափերուն եւ դրամներուն տեսակն ու ստորաբա-  
ժանութիւնը սովորած էին եւ համեմատութեան  
կանոններուն մէջ կը զեղբերէին: Ուսուցիչը արլուն  
քրտիք կը մտնէր բան մը կարենալ հասկնելու  
համար: Կանոն մը, Ֆորմիլ մը հասկնելու եւ գոց  
ընել տալու համար ո՞րքան յոգնութիւն եւ ժա-  
մավաճառութիւն եղած է արդեօք:

Գոնէ արարելէն լեզուի մէջ յառաջադիմու-  
թիւն ըրած ըլլալին, այդ ալ բան մ'էր: Սակայն  
հոն ալ միեւնոյն ամուրթիւնը. աշակերտք աւելի  
խղճալի ու յետադէմ էին այդ լեզուին մէջ՝ որուն  
ուսուցման մեծ կարեւորութիւն առած էր Հո-  
գաբարձութիւնը մէկէ աւելի ուսուցիչներ կար-  
գելով:

Երեւակայեցէք անգամ մը. սոյն լեզուի ու-  
սուցման համար բարձրագոյն կարգի աշակերտաց  
չարթական ցաւն ու չորս ժամ դասախօսութիւն  
որոշուած է, եւ եթէ գեղազրութեան դասն ալ  
միասին հաշուենք՝ կ'ընէ ընդամենը տասներեօթը  
ժամ. այսինքն ուսանողք ստիպուած էին ամէն  
օր իրենց զգրոցական ժամերուն կէսը նուիրել  
այդ լեզուին: Եւ սակայն հակառակ իրենց եր-  
բեակ, քստեակ ուսուցիչներուն՝ ոչինչ սովորած  
էին ուսանողք:

Հօնան քերականական հարցում մը կ'ուզողէր  
աշակերտին, որն որ զպոմնակէ շարժածի պէս գո-  
ցը կը զրուցէր այնպիսի յոռի արտասանութեամբ  
մը՝ որ շատ դժուար էր բան մը հասկընալու :

Իրենց ուսուցչին ըսած ամենապարզ նախա-  
դասութիւններն անգամ, ինչպէս՝ «ընտէլ իմթի-  
հան կուքրէմ էլ մէրու էլ կուհան» չէին կարող

ո՛չ ուղիղ գրել եւ ո՛չ ալ թարգմանել: Այսպէս  
ո՛չ գոց ըրածներէն եւ ո՛չ գրածներէն բան մը կը  
հատկընային աշակերտք, ինչպէս որ մին ալ ամե-  
նայն պարզութեամբ յայտարարեց:

Չարմանօք տեսնեք թէ ո՞ր եւ է արարելէն  
դասագրքէ ո՛չ ընթերցանութիւն ըրին եւ ո՛չ  
ալ թարգմանութիւն, մանաւանդ ընթերցանու-  
թիւնը, որ լեզուին ամենէն կարեւոր եւ էական  
մասը կը կազմէ:

Ահա՛ այս էր մեր ներկայութեան կատար-  
ուած քննութիւններուն արդիւնքը որ տխուր տը-  
պաւորութիւն մը թողուց մեր վրայ: Արդ, կը  
ներուի՞ մեզ արդեօք յայտարարել թէ վարժարա-  
նին կրթական վիճակը գոհացուցիչ ըլլալէ շատ  
հեռի է եւ թէ երկու տարուան նիւթական զոհո-  
ղութիւնք — տարեկան 700 ոսկիի գումար մը կը  
ծախսուի յիշեալ վարժարանին համար — ապար-  
զիւն եղած են:

Կրթական գործին դուրսը գտնուող անձինք  
տեղային կառավարութեան զպոքոցներուն համար  
պատրաստուած ծրագրին կառչած մնացած են:  
Չեն կրցած սա խիստ պարզ պարագան ըմբռնել  
թէ՛ կրկնապատի տղուն համար յատկապէս չափ-  
ուած ձեւուած հագուստը չկրնար բնաւ յարմարիլ  
մեր տղայոց: Երեւակայեցէք հայ ուսանողներ ու-  
րոնց հագուցեք են Ֆելլանին կալապիէն, գլուխը  
գրած են հէլմիթը (անգղիական գլխարկ) որուն  
փաթեթած են մոլայի սարքիւր: Ահա՛ այդ տղոց  
ուսուցման վիճակին կենդանի պատկերը: Հա-  
պա լեզուներն, մի՛ հարցունէք, Անկլո-արմէնո-ա-  
րապիւք բան մը՝ խիստ թերի ու սխալ, կատարելալ  
charabia մը:

Այս կրթական ճախողուածին — ներուի մեզ  
աստ անաչառութեամբ խօսիլ — մտամբ պատաս-  
խանաւոր է անօրէն էֆէնտին, որն որ իւր այս-  
քան տարուան ստացած փորձառութիւնէն առաջ-  
նորոգուած պէտք էր նշմարէր ճախող ուղղութիւ-  
նը եւ կանուխէն հեռանար այդ անկ ճամբէն:  
Տնօրէն էֆէնտինն անձնական արժանիքը եւ կա-  
րողութիւնը ամէն տարակուսէ վեր են, եւ ինքը  
մեր ամենուս համակրանաց արժանի, սակայն աղ-  
գային մանկուոյն օգուան ամէն նկատումներէ  
զեր ի վեր է: Հոգաբարձու գոտնուող անձն ըստ իս  
այնքան մեղադրելի չէ, քանի որ ո՛չ հայ լեզուին  
անգղիակ է, ո՛չ մեր ազգային բարբերուն եւ սո-  
վորութիւններուն:

Ուստի տնօրէն էֆէնտին պարտ էր վարժա-  
րանին կրթական մարմնոյն հետ միացած ամէն  
կերպով աշխատիլ համոզելու համար Հոգաբարձու  
էֆէնտին — Պէյը կամ Փաշան, ո՞վ որ ալ ըլլայ —  
թէ տոնմային դաստիարակութիւն ըսուած բան մը  
կայ, թէ մեր տղաք աշխարհաբարեբար ըլլալու  
չեն, թէ վերջապէս այդ կրթական ծրագիր նոյ-  
նութեամբ մեր տղայոց չ'կրնար յարմարիլ:

Եւ եթէ իւր զիտողութիւնք անլսելի մտային,  
պէտք էր ի գործ դնել ինչ որ իւր խիղճը ու կո-  
չումը կը թելադրեն:

Գուցէ ստարկուի թէ սոյն ծրագիր այն նպա-  
տակաւ կէտ առ կէտ գործադրուիլ կ'ուզուի, որ-  
պէս զի ազգային վարժարանէն չըջանաւարտ եւ-  
ղող աշակերտք կարենան մտնել կառավարական  
բարձրագոյն վարժարանները: Բայց այս ընթաց-  
քով մեր աշակերտք — քանի որ յատուկ Յանձ-  
նաժողովոյ մ'առջեւ անաչառ քննութիւն մը պար-  
տին անցունել — ոչ թէ միայն այդ վարժարան-  
ներուն սեմէն ներս չեն կարող մտնել, այլ մա-  
նիքարուաճի մը խանութի անգամ, հաւատա-  
ցէք, չեն ընդունուիր: Ասկից զատ մեր միջակ  
կատակարգի ծնողքներէն քանի՞ հատը կրնայ եր-  
կար տարիներ ծախքերու ստիպալ:

Չենք ուզեր աւելի ծանրանալ, եւ լուրջ ու-  
չադրութիւնը կը հրաւիրենք տեղական ազգային  
իշխանութեան, որուն վրայ կը ծանրանայ պատաս-  
խանատուութեան ամենամեծ բաժինը, քանի որ  
ոչինչ կրթական հաստատութիւն իւր վերին հսկո-  
ղութեան տակ կը գտնուի: Պէտք է խնայել այդ  
ուսանողներուն, որոնց թանկագին ժամերը յուժ-  
պէտս կը վատնուին: Մէկ խօսքով վարժարանը  
հիմնական բարեկարգութեան կը կարօտի:

Օ. Խ.

Պատ. Քաղաքական Ժողովն, որոյ ան-  
գամաց գրեթէ մեծամասնութիւնը բացակայ  
է ուղեւորութեանց պատճառաւ, նկատի ու-  
նենալով իրեն գիտեմ ընող պատահական  
կամ տեւական նպատ խնդրող կարօտեալ-  
ներու անօգուտ գեղեցումն ըն, Եկեղեցւոյ  
բակին մէջ կախուած պաշտօնական յայտա-  
բարութեամբ մը, ուշագրութիւնը կը հրա-  
ւիրէ կարօտեաց, որպէս զի յետ այսու փո-  
խանակ Քաղ. Ժողովոյ, ուղղակի Աղքատաց  
Հոգաբարձութեան գիտեն, ուր իրենց խնդ-  
րանքները առանց յապաղումներու ո՛ր եւ է  
լուծում պիտի կարենան գտնել:

Մ. Խ. — Աղքատաց Հոգաբարձութեան ան-  
գամք են՝ Արթ. Տէր Մամբէ Գահանայ Վարդան-  
եան եւ Մեծ Տեաք, Բիւզանդ Ալիքսանեան եւ  
Յովհաննէս Եսպրեան:

Գեր. Յ. Աշոտ Սրբազան, որ Առաջնոր-  
դական Տեղապահի պաշտօնէն հրաժարուին  
ի վեր մեծ կարեւորութիւն ունեցող ամուս-  
նալուծման խնդրով մը կ'ըբաղէր, ինչպէս  
կ'երեւի իւր . . . տեղեկագիրը պատրաս-  
տած եւ զրկած է առ որ անկ է, որովհէ-  
տեւ անցեալ շաբթու Աղեքսանդրիա մեկ-  
նեցաւ մէկ երկու ամիս այնտեղ օդ փոխե-  
լու եւ անտի իւր մտադրած վայրը մեկնե-  
լու համար:

Կը լսենք թէ Յ. Աշոտ Սրբազան «Հա-  
յաստանի Որբերու Խնամատար Յանձնաժո-  
ղովին» 97 Յուլիս ամսոյ մէջ բացած ստո-  
րագրութեանց տետրին ճակատը ստորա-  
գրած, տարեկան 300 դր. սղըր, անընդհատ  
վճարելու խոստումը բրած է, սակայն այս  
լուրը ոչ միայն մեզի այնչափ հաւա-  
նական չի թուիր, այլ եւ շատեր կը  
կարծեն թէ Մ. վարդապետի ստորագրու-  
թեամբ եղած մուրհակ մը . . . Եպիսկո-  
պոսը վճարելու պարտական չլինիր . . .

Տէր Գէորգ քահանայ Հիւրմուղեան,  
որ երկու տարի առաջ Գահարի չըջակայ  
զիւղերէն միոյն մէջ մկրտութիւն մը կատա-  
րելու սովոր Մ. Միւսանի տեղ ձիթախը  
գործածած էր եւ անպատիժ մնացած. այժմ  
վառնայի մէջ իւր ինչ ինչ արարքներով ամ-  
բատանաւ է:

Կ. Պոլոյ թերթերէն կը տեղեկանանք  
թէ, վարչութեան կրօնական փողովն երեք  
տարի քահանայադորձելէ դադարելու գա-  
տապարտած է յիշեալ քահանայն: Կը մնայ  
գործադրութիւնը . . .

Հեռագիրներու եւ թղթակցութեանց  
նոր dossier (խմբաժողով) մը կը բացուի տեղ-  
ւոյս առաջնորդական փոխ-տեղապահին եւ  
Աղեքսանդրիոյ առաջնորդ քահանային միջեւ:  
Խնդրոյն աւարական է երկու սերակցորդ-  
ներու միացումը, զոր չ'զիտացուի ինչ փաս-  
տերով չ'ուզեցին կատարել մեր քահանայ  
հարք եւ յոյն կղերները օգտուեցան այդ  
ստիժէն — ինչպէս կը տեղեկանանք Արեւ-  
ելցի թղթակցութեան մը: — Արդեօք չէ՞  
կարելի սպասել որ մեր տէր հարք բացատ-  
րեն մեզ այդ պակի արգիլաւթ պարտ-  
գաններն:

Այս կերպով 18/30 յուրիս հասարակական արդիւնաւոր օր մը եղաւ:

Գահիրէական Արաբիկիցի Երիտաւարաբներ տարւոյս մայիս 1ին կազմած էին իրաւարար Բնկերութիւն մը, որոյ Բնդհանուր Ժողովը տեղի ունեցաւ և Գիւտնի ու Գործադիր Ժողովոյ անդամաց ընտրութիւնը կատարուեցաւ օրինաւորապէս. Վասպուրականի ազգայնոց և Արաբիկիցի Երիտաւարաբներու այս որբախնամ ձեռնարկին համար կար և յաջողութիւն կը մտղթենք ի սրտէ:

Գարձեալ նորակազմ «Լատրանական Միութեան», առժամայ նախագահին կողմէ մեզ ուղղուած նամակէ մը կը տեղեկանանք թէ, կիրակի օր ընդհ. Ժողով գումարուած է Եկեղեցւոյ շրջափակին մէջ գտնուած մանկապարտէզ-վարժարանը եւ դաղանի քուտարկութեամբ հինգ անդամէ բաղկացեալ մասնախումբ մը կազմուած է ներքին և Բնդհ. կանոնադրները պատրաստելու և 13 օրէն գումարելի ընդհ. Ժողովին ներկայացընելու համար ի քննութիւն և ի վաւերացումն:

Մասնախումբի անդամներն են՝ Տեար. Զ. Ազատեան, Ե. Գարագաչ, Ռ. Նաղար, Կ. Երզնկացեան և Կ. Չոլաքեան:

Յաջողութիւն կը մտղթենք սոյն օգտակար ձեռնարկին ալ և կը սիրենք յուսալ թէ կարեւոր պակաս մը պիտի ընու Գահիրէի մէջ իւր գոյութեամբ:

Մեր ծանօթներու շատերուն յայտնած փափաքէն թեւադրեալ, առաջիկայ թիւէն սկսելով մաս առ մաս պիտի հրատարակենք Հայր Փ. Յ. Շարմըթեանի, (Martyrologe Armenien) Հայկական Մարտիրոսարիւն զըրբայկին թարգմանութիւնը, հայկական նուսանդներու կոտորածներուն վրայ հետաքրքրաշարժ տեղեկութիւններ պարունակող, որ մեր աշխատակիցներէն մին, խնամեւ պատրաստած և զրկած է մեզ:

Ա. Զ. Գ.

Ամեն անոնք, որոց մեր թերթը կը զրկուի և առաջին երկու թիւերն մեզի չեն վերագործներ, մեր բաժանորդաց ցուցակին մէջ կը նշանակուին իբրև բաժանորդ:

Լրագրաց Խմբագրութիւններէն կը խնդրուի փոխանակել իրենց թերթերն:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒԻՐԵՐ

Յարս Աշխատանքիէն կը քաղենք քանի մը մանրամասնութիւններ, գատական գործոց նախարարութեան փոխ-քարտուղար Է. մին փաշա Սիւ-Ահմէտի մահուան վրայ, որ ամսոյս 16ին տեղի ունեցաւ Աղեքսանդրիայէն Մարտիկեան մեկնող Մէսոպոթի Մարիթիմի Մեղրուրն շոգենաւին մէջ:

Շոգենաւը ամսոյս 14ի ուրբաթ օրը մեկնած էր Աղեքսանդրիայէն: Էմին փաշա ըստ իւր սովորութեան ժամանակին մեծ մասը կամրջին վրայ կ'անցընէր խօսելով և և ծիծաղելով: Կիւրակէ առաջ օր իւր առաջնութեան վրայ խանդարտ մը չէր տեսնուած, և և շատ արտօմանօք ճաշէ յետոյ կամրջին վրայ երած և իւր սովորական զուարթութեամբը սկսած էր խօսակցիլ շոգենաւին հրամանատարին հետ:

Յանկարծ արանդուրէնէ մը բռնուած խնդրեց հրամանատարէն որ բժիշկը կանչել տայ: Երկարօրէն խօսելու ժամանակ չ'ունեցաւ և ուժասպառ լինելով մարեցաւ:

Երբ բժիշկը հասաւ, Էմին փաշա արգէն գազարած էր ապրելէ, որտի կաթուածով:

Հակառակ բազմաթիւ ճամբորդներու միջամտութեան, ի մէջ այլոց Մաղում փաշայի (Ելմուսական նախարար), մինչև Մարտիկեան դիակը շոգենաւին մէջ պահել անկարելի եղաւ և նոյն օրը, կիրակի երեկոյն Մեղրուրնը գաղթեցնելով իւր ընթացքը Գորսիքա կղզւոյն առջև գազարած ծովը նետուեցաւ:

Հանգուցելոյն ընտանիքը 3000 ոսկի կը խոտանայ անոր՝ որ կարենայ գտնել գազարած ծովուն յատակէն:

Եգիպտոսի հելլէն գաղթականութիւնը կ'ողբայ այժմ իւր մեծ բարերարներէն Փօթ Սիբրոֆի կորուստը, որ անցեալ հինգշաբթի մահը իւր ծոցէն խլեց:

Գեռ թարմ է ամեն սրտերու մէջ յիշատակը սոյն բարերարին՝ որ հելլէն կառավարութեան պատերազմական ծախսոցը համար միանուազ հիւնգ միջեօսի փրանք արամադրեց:

Մեր յարգելի աշխատակիցներէն մին զրկած է մեզ այդ օրինակելի մեծ բարերարին կենսագրականը, անգլական և յոյն թերթերէ քաղելով, որ մեր առաջիկայ թիւով պիտի հրատարակենք:

Օտար երկիրներու մեր բաժանորդներն, իրենց բաժնեգիրը կրնան մեզ հասցնել «Մանսա-փոսթ»-ով մը ուղղեալ առ՝

E. TOROSSIAN

DIRECTEUR-REDACTEUR DU JOURNAL "ARCHA LOUIGE," LE CAIRE (Egypte)

Աղեքսանդրիոյ համար գործակալի մը պէտք ունինք, ստանձնել ուղղորդել կը խնդրուի գրառորակեցողի մը Արաբիոյ խմբագրութեան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Ս. Բէթէրապուրէ Տէրի Նիուզի ստացած մէկ հեռագրին նայելով, Ռուսիոյ Չարը նպատակ ունի եղեր, առաջիկայ ձմեռնոր քննօնքանս մը կազմել Արեւելեան ամենէն կարեւոր խնդիրներն խաղաղ կերպով կարգադրելու համար:

Կ'ըսուի թէ, ռուսական դահլիճն այժմ եռանդուն կերպով կ'զրպի հայկական և մակեդոնական խնդիրներով, որոց համար ամենուրեքմած Չարը բոլոր մեծ տէրութեանց համաձայնութեամբ կարգադրութիւն մը ընել կը բազմայ:

Թաւնի օրուան լուրերուն մէջ կը կարգանք թէ, Ֆրանսայի Հանրապետութեան նախագահն, յուրիս 14ի ազգային տօնին առթիւ, Պատերազմական նախարարութեան առաջարկութեան վրայ, ներում շնորհած է 893 գատապարտեալներու, որոնք Պատերազմական խորհրդոյ ատենին արձակած վճռադրեղովն, զինուորական և քաղաքական յանցաւորներու յատուկ բանտերուն մէջ կալանաւոր էին:

Հազարի մօտեցող կարեւոր թուով, իրաւացի վճիռներով գատապարտեալներու, Ֆրանսայի Հանրապետութեան նախագահին ներման արժանանալը, գեղեցիկ օրինակ մը կրնայ լինիլ ուրիշ իշխանութեան մը, որոց բանտերուն մէջ հազարաւոր անմեղներ կը հեծն:

Առաջին անգամ ըլլալով Լոնտոնայի մէջ մեծ շքով տօնուեցաւ Մեկրուսի հանդէսը:

Թերթիս յարգելի արտօնատէր և միանգամայն աշխատակիցը՝ Տր. Ա. Ս. Յակոբեան, կարգ մը հիւանդութիւններու ծագման, օխտանիշերուն և դարմանումի կրանակներուն վրայ խիստ չահեկան տեղեկութիւններ պարունակող յօդուածներու շարք մը կ'սկսի այսօրու ընէ, զորս մեր ընթերցողաց մասնաւոր ուշադրութեանը կը յանձնարարենք:

Թ Ո Ք Ա Ս

Ա.

Հիւանդութիւններ կան որ յատուկ են մասնաւոր երկիրներու և կլիմաներու, և թէև իրենց հասուցած միծամեծ փոստներն և պատճառած անհաճոյ աղէտներն ոչ սակաւ տխուր տպաւորութեան հետքեր ձգած են ընկերական շրջանին մէջ. սակայն երբէք չեն կրցած այնքան սարսափ ազդել մարդկային ազգին որքան անկարող գտնուած են իրենց օրոյնալ սահմանէն անդին անցնելու: Հիւանդութիւններ ալ կան որ կարծես անզուսպ տեն մը ունին իրենց աւերիչ արքայապետութիւնը տարածելու և հաստատելու ամեն երկրի և ամեն կլիմայի մէջ՝ ուր անխնայ կը կատարեն իրենց անուրի գերն առանց ո' և է խտրութեան սեփի և հասակի, պիտութեան և աստիճանի:

Կան նաեւ ուրիշ կարգ մը հիւանդութիւններ ևս՝ որ մանրէներու (պարզերու) ահագին խումբեր կազմելով կատաղի արշաւանքներ կրնան յերկրէ յերկր և կլիմայէ ի կլիմայ: Այս կարգի հիւանդութեանց գործունէութեան կ'որոնս ո'չ միայն կատաղի կերպով յարձակողական է, այլ և իրենց մարտին բուն նշանաբանն է խաճիւղ և ոչնչացընել: Ասանցմէ զատ կան նաեւ ուրիշ հիւանդութիւններ ալ, որ սոսկալի կոտորածներ կ'ընեն միայն, և այն բարիբախտաբար, սահմանափակ վայրերու մէջ:

Եւ որովհետեւ այս հիւանդութեանց ամենն ալ չեն վերաբերի մեր ներկայ նիւթին, ուստի այլ առթիւ թողով անոնց իւրաքանչիւրին վրայ առանձինն գրելու գիտաւորութիւններս, առ ոյժ մեր տեսութիւնը պիտի պարզեմք բոճախի վրայալստ մը, որ անման ուրիշ հիւանդութեանց՝ զոգցուն աշխարհաքաղաքացիութեան գերը միայն ստանձնած անձայն և անշուկ սոսկալի ուճիրներ կը գործէ ամեն երկրի և ամեն կլիմայի մէջ:

Միայն Միացեալ Նահանգաց մէջ սարեկան 100,000ի չափ գոհ կ'երթան այս անողոր ակտիւն: Յիշեալ երկրի 1890ի մահացուցակէն կը տեսնուի որ նոյն տարուան մէջ 102,119 մահեր պատահած են միայն թոքախտի հիւանդութիւններէ: Հաշիւ եղած է որ Մեծն Բրիտանիոյ մէջ տարեկան ոչ նուազ քան 110,000 հոգիներ կը մեռնին թոքախտի հիւանդութիւններէ: Անցեալ մայիս ամսոյ մէջ ի Պեպին տեղի ունեցած «Հիւճախտի գէժ Համաժողով»ին մէջ, Ֆրանսայի ներկայացուցիչն Տր. Պրուարտի իւր մէկ բանախօսութեամբ կը յայտարարէր թէ Ֆրանսայի մէջ թոքախտի տարեկան զոհերու թիւը կը հասնի 150 հազարի: Նոյնը կը հաստատէ L'Echo Medical իւր վերջին յուլիսի թուոյն մէջ: Թող որ վերջերս Օտիֆոն իւր մէկ շրջաբերականին մէջ կը յայտարարէր թէ Ֆրանսա ամեն տարի 160,000 հոգի կը կորսնցնէ հիւճախտի երեսնէ: Եւ թէ այս թիւերուն կցէինք Գերմանիոյ, Աւստրիոյ, Իտալիոյ, Ռուսիոյ և այլ քաղաքակիրթ ու կէս քաղաքակիրթ երկիրներու մէջ թոքախտէ պատահած մահերուն թիւը, տարախոյս չկայ թէ շատեր պիտի անարեկէին տեսնելու թէ քանի՞ քանի՞ գեղանի կոյսեր ու երիտաւարաբներ որ գեռ նոր պիտի թեւակոխէին իրենց կենաց գեղեցկացոյն ժամանակին մէջ իւրոյ բացուելու գորէն վարդի կոկոններու, գեռ չբացուած խամրած են վաղահաս:

Նա՞ որ իւր հրապուրիչ նայուածքով և նազելաչափ քաղաքակրթ գոգցես գերթ գիցուի ամեն ոք հմայելու և իւր երկրպագուն ընելու համար միայն ծնած էր, այժմ սոճոյն գէժքով, զոգցուն ձեռքերով, ցցուեալ և ոսկրուտ այտերով, խոտչացեալ աչերով, հարած ու մաշած կարծես կլիմաք ո' է դարձած այլոց գլխոյն և կարեկցութեան առարկայ մը լինելու — ինչ սոսկալի հապաղատկիր— Այն՝ որոց համար հաղիւ գեռ մի քանի ամիսներ յառաջ ամեն ոք հիւանդութեան կը խօսէր իբրև թէ իւր անման գեղեցկութեամբ եղած լինէր ընտելեան մի հրաշակերտն, այժմ իւր մեռելատիպ գէժքով կարծես ընկերութեան մի արհամարհանքն է դարձած: Ինչո՞ւ վարակեալներ թերեւ գէժքերն կը ժպտի յարտաքուստ, սակայն սրտերնին տխուր է ի ներքուստ:

Թերեւս լեզուներն կ'երգէ ցնծազին, սակայն հոգի- նին կը հառաչէ լալազին:

Յիշատակութեան արժան է նաեւ սա կէտն եւս որ յաճախ զգայուն մտքի, զգայուն սրտի եւ իմացականութեան բարձր կարողութեան աէր սն- ձինք են որ յարձակում կը կրեն այս նենգաւոր արտաէն: Քանի՞ յաճախ ճամբարի հանձարի մը կայծը մարած է իւր օրօրոցին մէջ եւ իւր թոխ ու խորթախանց միտքն որ անզուսպ տենջով մ'ի խնդիր ելած էր բարուցն եւ ճշմարտին, գե- ղեցկին եւ վսեմին կենդանի պղբերակին, ծիրախ- տի յաւիտենական քունով միանգամ ընդ միշտ հրաժեշտ տուած են այս կեանքէն ինչ՞հ՞ Գուր- եան, Պարոնեան եւ Արծրունի՝ արդեօք ինչի՞ր պի- տի չ'արտադրէին՝ մին իւր բանաստեղծական թոխ մտքովն՝ միւսն իւր սրախօսական հանձարովն՝ իսկ երրորդն իւր գիտական տաղանդովն՝ եթէ թոքախ- տի վաղահաս մահով երեքն ալ յաւիտենականու- թեան դատապարտուած չլինէին: Եւ սակայն կը տեսնենք թէ թոքախտը կարեկցութիւն չունի, ոչ ալ գուժ եւ խիղճ, այլ ալ ու ձախ իւր հար- ուածը կուտայ անխտիր:

«Թոքախտն ինքնին միայն», կըսէ Տր. Ար- լօրնի, «ծաղիկի, կարմրախտի, թիֆօի եւ տիֆթէ- րիի հիւանդութեանց պատճառած հաւաքական մահերէն չորս անգամ աւելի մահեր կը պատճառէ, եւ փոխանցիկ հիւանդութեանց ամենէն աւելի մա- հացուն է եւ պատահած մահերուն մէկ հինգերոր- ղը այս արտախտը կը վերագրուի: Քաղաքի բնակիչ- ները աւելի շատ կը վարակուին: Բարիկի եւ Վի- ճնայի մէջ տարին 100,000 ժողովուրդէն 450ը զոհ կ'երթան այս արտախտէն, ի Պուտսքէթ այս թի- ւը կը բարձրանայ 640ի: Այս հիւանդութիւնը թէեւ մուտ կը գտնէ ամեն դասակարգի մէջ, սակայն իւր ըրած շատակութիւնները աւելի անտանձան են աղքատ դասակարգի մէջ: Ի Բարիկ հարուստ թաղերու մէջ 100,000 բնակչէն միջին հաշւով 178 հոգի կը մեռնին, մինչդեռ աղքատ թաղերու մէջ կը մեռնին 812 հոգի: Գրեթէ նոյն համամասու- թիւնը ցոյց կուտան նաեւ Եւրոպայի ամբողջ մայ- րաքաղաքներու վիճակագրութիւնները» (տես La Dosemetrie 1898 Août N° 8) ի բաց առ- եալ անշուշտ Թուրքիոյ մայրաքաղաքը, Կ. Պօլիս՝ ուր կանոնաւոր վիճակագրութիւն մը ունեցած չէ տակաւին բացի իւր մարդատեաց ընթացքէն, որոյ չտրոհել առաւել քան զհիւժախա բաղմամբ կու- տորածներ ըրած է:

Բժշկական աշխարհն իւր ցարդ յառաջ վա- րած գիտական մանրակրկիտ խուզարկութիւննե- րովն ընդունած է թոքախտի չորս տեսակներն միայն, որք են.

- 1. Հարբխային թոքախտ (Pneumonic Phthises)
2. Թիւպէրքուլային » (Tubercular »)
3. Նեարդային » (Fibroid »)
3. Արագահիւժ » (Galloping »)

(1) Հարբխային թոքախտ.— Ըստ Բրոք. Հիւզի՝ սա թոքային հիւանդութիւնն սպասման մէկ կերպն է, եւ յառաջ կուգայ թոքերու մէջ տեղի ունե- ցած բորբոքալի արտադրութեանց պանրային ալ- լաստուումէն, եւ յաջորդական կակղացմամբ ու ջնջմամբ պանրային նիւթոյ՝ թոքային հիւանդու- ներու առաւել կամ նուազ սպասման հետ:

(2) Թիւպէրքուլային թոքախտ.— Հիւանդութեան այս ձեւն թոքերու մէջ այտուցային կամ թիւ- պէրքուլային կերպաւորման եւ զարգացման ար- դիւնք մի է, այս այտուցիկներն կամ թիւպէր- քուլային ի սկզբան կ'երեւին ի ձեւ փոքրիկ, գորշ եւ կլորաթափանցիկ հատճաւորներու՝ որ տակաւ միծնայով կ'ստանան մութ եւ անթափանցիկ կեր- պարան մը, հուսկ ապա պայթիլով ցնցողային խո- ղովակիներու մէջ, կ'սպառեն թոքային գոյացու- թիւնը:

(3) Նեարդային թոքախտ.— Բրոք. Հիւզ կը հաստատէ թէ թոքային հիւանդութեանց այս կերպն չափազանց թանձրացում մ'է, թոքային շարակ- ցական հիւանդութիւնն եւ կը պատճառէ անտա- ծութիւն — ծայրայից հիւժում մը առ ի չղոյէ սը- նընդեան — եւ օդային փամփուշտներու ջնջումն:

(4) Արագահիւժ թոքախտ.— Սա եւս սատիկ տենդային վիճակ մ'է իբր արդիւնք գորշ հատա- լից այտուցիկներու արագ աճման, մարմնոյն ալ եւ ալ մահերուն, մասնաւորապէս թոքերուն մէջ:

ՏՐ. Ա. Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

ՇԻՇԱՂՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱՏՈՅ

- Հայր մը իւր աղջկանը.
— Վարսէ՛ն, ամեն օր համար կտոնե՞ս կօր:
— Այո՞, հայրիկս:
— Քերականց կես բրի՞ր:
— Լմցուցի պիկ:
— Անանկ է եւ բե՛ր մէյմը նայիմ:
— Ի՞նչ պիտի նայիս, բօօրը պիկէ չլմաց:

Քահանայն եւ փոքրիկ վաղիկակը, որ կնիւ- հայր էր.
Քահանայն.— Երախայս զի՞նչ խնդրէ:
Վաղիկակ 9 տարեկան՝ որ նոյն միջոցին ման- կիկին հանած սուր երեքեքն շուարեով մտնցած էր իր արիւթ պատասխանը,
Քահանայն կը կրկնէ իւր հարցումը. — Երա- խայս զի՞նչ խնդրէ:
Վաղիկակ.— Մայրիկին ծիծը՝ . . . .

ՏՕՐՔՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՍՏՄԱՐՈՅԺ Ապիսի, Շարէ Բուպրի, քիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հա- սակի յարմար ընտիր սպրանքներով կեզծ սկուաներ:

Կը դադարեցնէ վաղեկեանայէս ակուայի ցա- ւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերովն:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տե- սակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած սկուաներուն տոկոնու- թիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

1—10

Ա Ձ Դ

Տիկին Սօֆիկ ազգապետան, մանկաբարձ, վկայեալ կայսերական վարժարանէն, այժմ բնա- կութիւնը Գահիրէ հաստատած ըլլալով, պատիւ ունի ծանուցանել հայ հասարակութեան՝ որ պատ- րաստ է իւր խնամքները տալ իրեն պէտք ունե- ցողներուն:

Իր երկարամանակեայ փորձառութիւնը եւ խղճամիտ աշխատութիւնը զինքը քաղաքիս ա- ռաջնակարգ մանկաբարձերու կարգը կանցընեն:

Դիմել Պէն-էլ-Սուրէն, Դուրունֆիլ շրջոց թիւ 53:

1—6

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (բաստրոզ) սեւ, չազանակազոյն և ոսկեգոյն: Սեւ ներկ շիշով վայրկեանայէս սեւեղնող: Սոյն ներկերու տեսողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադարեցնէ եւ մա- զերը կը ճօխացնէ: Նմանապէս ճաղատ (տազ) գլուխները մազ կը բերէ. 17 տարուան ճա- ղատ գլուխներու վրայ փորձուած և հիւս- նայի արդիւնք տեսնուած է: Ծիշը 8 դրշ. ողջ (2 ֆրանք):

Բուտրա՝ սքանչելի տեսակէն, որը միան- դամայն մարմինը քրտինքիսաչէ զերծ կը պահէ:

Ճերմկեղնոզ ջուր շիշով, որը մարմնոյն բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացնելու: Եգիպտոսի մէջ միակը:

Լոգանքի ջուր, մարմնոյ թէ՛ փափկութիւն և թէ՛ անուշահոտութիւն կուտայ:

Ակուայի փոշի և ջուր. մին մաքուր և ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող և ամրացնող:

Թող փութան օգտուել այն անձինք՝ ու ըննց գլխու մաշկին սկսած են տակաւ առ տակաւ թափել և օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Օտար երկիրներէ և գաւառներէ կան- խիկ գրամով եղած յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

Սոյն ջրերէն կարելի է գտնել նաև Ապ- տին, Տայրէի Սանիէի դիմաց Պազար Թիւրք վաճառատներ:

Կը գնենք, կը վաճառենք և կը փոխա- նակենք բոլոր ազգաց գործածած նամա- կադրոյմները:

1—4

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՐԱՏՈՒՆ Ի Պ. Ա. Ն. Զ. Ի. Ե. ՇԱՐԱ ՄՕՉԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ) Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի և տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝ Երչաբերականներ, Մահազդեր, Հրախրագրեր, Այցեխարտեր, Յունկեր, Գիտքեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմար, Բնկերոսքեանց եւ շահատականներու տպագրական ամեն պիտոյներ: Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգաբերութեանց շտրիւ կը խոտանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մարքութեան, ճշգրտապահութեան և գներու չափաւորութեան մէջ: Եգիպտոսի ու է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութով կը կատարուին: